ՄԵ՛ՆՔ ԵՆՔ
ՄԵՐ ՍԱՐԵՐԸ

Զարգացման
գործակալություն

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հունվար-հունիս
2024

ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՎ ՌՈՒԲԵՆԻ ԳՈՐԾԸ

«Մենք ենք մեր սարերը» տարածքային զարգացման գործակալությունը հիմնադրվել է 2022 թվականի վերջին Ռուբեն Վարդանյանի և գործընկերների կողմից՝ Արցախի և Սյունիքի աջակցության և զարգացման ծրագրեր իրականացնելու նպատակով: 2022-2023 թվականների ընթացքում Արցախում, Ադրբեջանի կողմից շրջափակման պայմաններում, Կազմակերպությունն իրականացրել է ավելի քան 2 մլն դոլարի նախագծեր (ծրագրեր), որի մասին հաշվետվությունը հասանելի է **այս** հղումով:

Չնայած այն հանգամանքին, որ կազմակերպության հիմնադիր Ռուբեն Վարդանյանը 2023 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից ապօրինի գերեվարվել է և առ այսօր գտնվում է անազատության մեջ Ադրբեջանում, հավատարիմ մնալով իր մարդասիրական սկզբունքներին, նա հորդորել է շարունակել կազմակերպության բարեգործական գործունեությունը՝ Արցախից բռնի տեղահանված ժողովրդին աջակցելու համար:

2023 թվականի հոկտեմբերից «Մենք ենք, մեր սարերը» շարունակում է օգնել Արցախից բռնի տեղահանված ընտանիքներին վերականգնվել ծանր ցնցումներից, ինչպես նաև արժանապատվորեն հարմարվել նոր իրողություններին՝ նպաստելով նրանց սոցիալական զարգացմանը և ապահովելով տնտեսական կայունությունը:

2024 թվականի մարտին կազմակերպությունը վերանվանվել է **«Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալության**:

ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ, ԿԱՅՈՒՆԱՆԱԼ, ԶԱՐԳԱՆԱԼ

2024թ շարունակելով աջակցության ծրագրերը, «Մենք ենք մեր սարերը» ջանքերը կենտրոնացրել է արցախցի ընտանիքների հոգեկան առողջության վերականգնմանը, սոցիալ-տնտեսական վիճակի կայունացմանը և Հայաստանում իրենց ներուժի իրացմանը: Աջակցության ծրագրերի հիմնական թիրախներն են երեխաները, ակտիվ երիտասարդները, արհեստավոր արցախցիները:

2024թ. Հունվար-հունիս ամիսներին գործակալությունը գործընկերների հետ համատեղ իրականացրել է ավելի քան 200.0 հազար ԱՄՆ դոլարի նախագծեր և ծրագրեր (տես՝ աղյուսակ), որոնց շահառու են դարձել շուրջ 8000 հոգի:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽՑԻ ՎԱՐՊԵՏՆԵՐԻՆ

Նկարագիր

Աշխատանքային գործիքներ և սարքավորումներ են տրամադրվել Արցախից բռնի տեղահանված վարպետներին՝ Հայաստանում իրենց գործունեությունը վերսկսելու նպատակով (յուրաքանչյուրին մինչև 1,300 ԱՄՆ դոլար արժողությամբ)։ Նոր մասնագիտություն ձեռք բերել կամ իրենց մասնագիտության մեջ կատարելագործվել ցանկացողների համար կազմակերպվել են մասնագիտական դասընթացներ։

Բյուջե

Շուրջ 88,8 հազար ԱՄՆ դոլար

Ժամկետ Հունվար-ապրիլ 2024

Աշխարհագրություն Երևան և ՀՀ մարզեր

Շահառուներ **437 տեղահանված արցախցիներ, այդ թվում՝**

Ուղղակի **87 արհեստավորներ** (դերձակներ, ոսկերիչներ, կոշկակարներ, զոդողներ, խեցեգործներ, փայտագործներ, դարբիններ, քարագործներ, հրուշակագործներ, կահույքագործներ, վերանորոգողներ, վարսահարդարներ և այլն)

Անուղղակի Ընտանիքի անդամներ՝ **շուրջ 350 մարդ**

Ազդեցություն **87 վարպետներ** ստացել են գործիքներ և սարքավորումներ, այդ թվում **28 շահառու** մասնակցել է նաև վերապատրաստման դասընթացի (վարսահարդարում, մատնահարդարում, հրուշակագործություն)։ **87 շահառուներից 80-ը արդեն** վերսկսել են իրենց գործունեությունը Երևանում և ՀՀ մարզերում։



«ԹԵՎԵՐ» ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նկարագիր

Ծրագիրը ներառում է Արցախից բռնի տեղահանված երեխաների վերականգնման համալիր միջոցառումներ՝

- Հոգեբանական վերականգնում՝ արտթերապիայի միջոցով,
- Ֆիզիկական վերականգնում՝ սպորտային պարապմունքների միջոցով (լող, ֆուտբոլ, վոլեյբոլ, այլ),
- Մտավոր ռեսուրսների զարգացում՝ ոչ ֆորմալ կրթության դասընթացի միջոցով:

2023թ. պիլոտային փուլի փորձից ելնելով, ծրագրում ավելացվել է երկու նոր բաղադրիչ՝

- ընտանիքների հոգեբանական ապաքինում՝ անհատական և խմբակային թերապիայի միջոցով
- սոցիալական ինտեգրում ու նոր բնակավայրի հետ ծանոթություն՝ ճանաչողական էքսկուրսիաների, համայնքային միջոցառումների և արշավների միջոցով:

Բյուջե

Շուրջ 32 հազար ԱՄՆ դոլար

Ժամկետ Մարտ-մայիս 2024

Աշխարհագրություն Դիլիջան

Շահառուներ Շուրջ **485** տեղահանված արցախցի, այդ թվում՝

Ուղղակի **4-18 տարեկան 76 արցախցի երեխա և 41 ծնող**

Անուղղակի Ընտանիքի անդամներ՝ **շուրջ 360 հոգի**

Ազդեցություն Երեխաների մեծամասնության մոտ նկատելի է առկա խնդիրների (անքնություն, անհանգստություն, վախ, անվստահություն, հուսահատություն, հուզական անկայունությունը) հաղթահարում և հոգեբանական բարեկեցության դրական տեղաշարժ դեպի ճկունություն, կայունություն և ապագայի հույս: 12 մասնակիցների հետ մասնագետները կշարունակեն աշխատել անհատական ռեժիմով: Թերապիայի կուրսն ավարտած ծնողների 70%-ը կայունացրել է հոգեբանական վիճակը, մնացածը ցանկություն է հայտնել հաջորդ փուլում շարունակել աշխատանքը մասնագետների հետ:



«LEADERS-2-LEADERS» ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Նկարագիր

Ծրագիրը կազմակերպվել է Առաջնորդության ու մասնագիտական զարգացման «Մատենա» միջազգային դպրոցի արցախցի շրջանավարտների համար՝ աշխատաշուկայում նրանց մրցունակությունը բարձրացնելու, ձեռնարկատիրական նախաձեռնությունները զարգացնելու և համախոհ առաջնորդների վստահելի ցանց ստեղծելու նպատակով: Ծրագիրը բաղկացած է 8 մոդուլներից: 2024 թ. առաջին կիսամյակում կազմակերպվել են հետևյալ մոդուլները.

- «Ապագայի կառուցում և նպատակների սահմանում»
- «Աշխատանքի տեղավորման և զբաղվածության խթանում» մոդուլները:

Բյուջե

Շուրջ 22.9 հազար ԱՄՆ դոլար, որն ամբողջությամբ ապահովվել է դասընթացավարների՝ անհատույց մատուցված ծառայությունների միջոցով:

Ժամկետ Փետրվար-մայիս 2024

Աշխարհագրություն Երևան

Շահառուներ Շուրջ **135 տեղահանված արցախցիներ**, այդ թվում՝

Ուղղակի **30 երիտասարդ առաջնորդներ**

Անուղղակի Ընտանիքի անդամներ՝ **105 հոգի**

Ազդեցություն Ազդեցությունը-Մասնակիցները ձեռք են բերել նոր գիտելիքներ ու կարողություններ, ինչն իրենց իսկ հավաստմամբ, օգնում է ինտեգրվել և իրենց տեղը գտնել նոր միջավայրում: Շահառուների մոտ 50%-ը կարողացել է աշխատանք գտնել, որից մոտ 10%-ը՝ իրենց մասնագիտությամբ, անկախ, որ շահառուին աշխատանքով ապահովումը չի հանդիսանում ծրագրի հիմնական նպատակ:

ՖՐԱՆՍԵՐԵՆ՝ ԱՐՑԱԽՑԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Նկարագիր

Երևանի՝ Միսաք Մանուշյանի անվան թիվ 48 դպրոցի հետ համագործակցությամբ 2024 թվականի մարտ-հունիս ամիսներին կազմակերպվել են ֆրանսերենի 60 ժամ լրացուցիչ դասեր 4-9-րդ դասարանների արցախցի այն երեխաների համար, որոնք տեղահանությունից հետո ապաստանելով Երևանում, ընդունվել են ֆրանսերենի խորացված ուսուցմամբ դպրոց: Նախագծի նպատակն էր՝ օգնել Արցախից բռնի տեղահանված երեխաներին՝ վերականգնել շրջափակման և տեղահանության հետևանքով բաց թողնված դասերը, յուրացնել նոր ուսումնական նյութը և հետ չմնալ դպրոցական ծրագրից:

Բյուջե

Շուրջ 1.4 հազար ԱՄՆ դոլար

Ժամկետ Ապրիլ-հունիս 2024

Աշխարհագրություն Երևան

Շահառուներ **108 բռնի տեղահանված արցախցիներ**, այդ թվում՝

Ուղղակի **Արցախցի 24 դպրոցականներ**

Անուղղակի Ընտանիքի անդամներ՝ **84 հոգի**

Ազդեցություն Մասնակիցների 90%-ը, որոնք Արցախում ֆրանսերեն չէին սովորել, ստացան նախնական լեզվական գիտելիքներ, 10%-ը՝ վերականգնեց ծրագրային բացը:

«ԿԵՆԱՑ ԾԱՌ» ՏԱԹԵՎՈՒՄ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳՈՒ ՀԻՄՆՄԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

Նկարագիր

«Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը՝ համագործակցելով գործընկեր կազմակերպությունների հետ, Տաթևի վանքի հարակից տարածքում նոր պտղատու այգի է հիմնել: Նոր այգում տնկվել է 1000 ծառ՝ խնձորենի, տանձենի, կեռասենի և սալորենի: Այգու հիմնմանը մասնակցել են ավելի քան 268 անհատ նվիրատուներ 23 երկրներից և մեկ տասնյակից ավելի կազմակերպություններ՝ միավորելով բարին արարելու բոլորիս ցանկությունը և արտահայտելով իրենց զորակցությունը Բաքվի բանտում ապօրինի պահվող հայ գերիներին: Մայիսի 25-ին Գործակալության նախաձեռնությամբ տեղի ունեցավ ուխտագնացություն դեպի Տաթևի վանական համալիր: Ավելի քան հազար ուխտավորներ մասնակցել են միասնական աղոթքին՝ գերիների ազատության համար: Ռուբենի և իր ընկերների անունից տնկվել է խորհրդանշական «Կենաց ծառը՝ սոսին (չինար, տնջրի) խորհրդանշելով հայ ժողովրդի տոկունությունը, գթասրտությունն ու միասնությունը: Նախագծի աջակիցների շնորհիվ ստեղծվել է ոռոգման կաթիլային համակարգ:

Բյուջե

Շուրջ 64.8 հազար ԱՄՆ դոլար

Ժամկետ Ապրիլ-մայիս 2024

Աշխարհագրություն Սյունիք, Տաթևի համայնք

Շահառուներ **Շուրջ 7 250 մարդ, այդ թվում՝**

Ուղղակի **1 062 մարդ**

Անուղղակի **Ավելի քան 6 000 մարդ**

Ազդեցություն Ստեղծված այգին երկարատև ազդեցություն է ունենալու Տաթև համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման վրա:

«ԿԵՆԱՑ ԾԱՌ» ՏԱԹԵՎՈՒՄ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳՈՒ ՀԻՄՆՄԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

Ազդեցություն

Նախագծի իրականացման արդյունքում գոյացած գումարի մի մասն ուղղվել է Տաթևի վանքի կարիքների բավարմանը: Հանգանակված միջոցների մեծ մասն ուղղվել է Տաթևի երիտասարդության զարգացմանը:

Ապահովվել է 12 տաթևցի տղաների և աղջիկների մասնակցությունը Դիլիջանում UWC Dilijan միջազգային ամառային ճամբարին:

ՈՒՂԻՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅԼ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նկարագիր

Գործակալությունը ուղղակի ֆինանսական աջակցություն է ցուցաբերել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մարդկանց՝ պրոթեզավորման կարիք ունեցող զինվորական հաշմանդամի, բազմազավակ և սոցիալապես անապահով ընտանիքների:

Բյուջե

Ավելի քան 5.4 հազար դոլար

Ժամկետ Ապրիլ-հունիս 2024

Աշխարհագրություն Երևան, Արագածոտնի մարզ, գյուղ Աղձք

Շահառուներ **20 արցախցիներ**, այդ թվում՝

Ուղղակի **12 անձ**

Անուղղակի **8 անձ**

Ազդեցություն Բազմազավակ՝ 9 երեխա ունեցող տեղահանված ընտանիքի տրամադրվել են մեղվափեթակներ՝ մեղվաբուծությամբ զբաղվելու համար:

ՈՒՂԻՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅԼ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապրիլի 23-ին և 24-ին, ի զորակցություն Բաքվի բանտում հացադուլ հայտարարած Ռուբեն Վարդանյանին, «Մենք ենք մեր սարերը» միացել է Ադրբեջանում ապօրինաբար պահվող բոլոր բանտարկյալների ազատ արձակելու պահանջով դեպի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր երթի կազմակերպման աշխատանքներին՝ հիշեցնելով ողջ աշխարհին, որ ցեղասպանությունը շարունակվում է նաև այսօր:

Ֆրանսիայի «Սատար Արցախին» միության հրավերով «Մենք ենք մեր սարերը» Գործակալության ներկայացուցիչներ Նարինե Աղաբալյանը և Սոնա Հովհաննիսյանը մասնակցել են մայիսի 14-ին Ֆրանսիայի Հանրապետության Սենատում տեղի ունեցած **«Համախմբում Հայաստանի համար և ի աջակցություն Լեռնային Ղարաբաղի տեղահանված ժողովրդի»** խորագրով աշխատաժողովին, որին հրավիրված են եղել տեղահանված արցախցիներին աջակցություն ցուցաբերող ֆրանսիական դերակատար կառույցների ներկայացուցիչներ, բարձրաստիճան դիվանագիտական պաշտոնյաներ:

ՆԱԽԱԳԾԵՐ	Իրականացված նախագծերի արժեքը (ԱՄՆ դոլար)	Շահառուների մոտավոր թիվը	Այդ թվում՝ ուղղակի շահառուներ
Աջակցության նախագծեր Արցախից բռնի տեղահանվածների համար, այդ թվում.			
▪ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽՑԻ ՎԱՐՊԵՏՆԵՐԻՆ	$ 88 752	437	87
▪ «ԹԵՎԵՐ» ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ՝ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ	$ 32 578	485	117
▪ «LEADERS-2-LEADERS» ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ	$ 22 855	135	30
▪ «ԿԵՆԱՑ ԾԱՌ». ՏԱԹԵՎՈՒՄ ՊՏՂԱՏՈՒ ԱՅԳՈՒ ՀԻՄՆՄԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ	$ 64 766	7 250	1 062
▪ ՖՐԱՆՍԵՐԵՆ՝ ԱՐՑԱԽՑԻ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ	$ 1 424	108	24
ՈՒՂՂԱԿԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅԼ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	$ 5 405	20	12
ԸՆԴԱՄԵՆԸ	**$ 215 780**	**8 435**	**1 332**

«Մենք ենք մեր սարերը» զարգացման գործակալությունը իր խորին երախտագիտությունն է հայտնում բոլոր **աջակիցներին**, որոնց նվիրատվությունների և ջանքերի շնորհիվ իրականացվել և շարունակվում են իրականացվել կազմակերպության ծրագրերը:

+374 60 700 800

info@ourmountains.am

www.ourmountains.am

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

ՄԵ՛ՆՔ ԵՆՔ
ՄԵՐ ՍԱՐԵՐԸ
Զարգացման
գործակալություն